ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«21» դեկտեմբերի 2023 թ. No 26/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՆԱԵՎ» ՍՊԸ -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/35-Ք**

Մասնակից՝ **«ՆԱԵՎ» ՍՊԸ**

/ՀՎՀՀ՝ 05022204, գործունեության հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ

գ. Արագած 8-րդ փողոց 6/2 տ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով 24.11.2023թ. հայտարարվել է ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-23/35-Ք ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը, որին հայտ է ներկայացրել նաև «ՆԱԵՎ» ՍՊԸ -ն: Գնահատող հանձնաժողովը 07.12.2023թ.-ին կայացած նիստում արձանագրել է, որ «ՆԱԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը լրացված են հրավերի պահանջներին ոչ համապատասխան. մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3, ներկայացված չէ:

Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան «ՆԱԵՎ» ՍՊԸ-ն չի ներկայացրել շտկված փաստաթուղթը, որի հիման վրա գնահատող հանձնաժողովի 11.12.2023թ. թիվ 3 որոշմամբ կազմակերպության կողմից ներկայացված հայտը համարվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 42-րդ կետը հանձնաժողովը մերժել է «ՆԱԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

1. Եզրահանգում

Վերոնշյալ կարգավորումների համատեքստում անդրադառնալով առկա փաստական հանգամանքներին՝ պետք է արձանագրել, որ ի հակադրություն հրավերի պահանջներին՝ որպես գնման գործընթացի մասնակից հանդես եկած «ՆԱԵՎ» ՍՊԸ-ն՝ չներկայացնելով հրավերով սահմանված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «ՆԱԵՎ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, որոշում եմ «ՆԱԵՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

12/21/2023

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 **ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am